ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ

01.06.2021

Սիրելի փոքրիկներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ հունիսի 1-ի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ՝ ցանկանալով խաղաղ, անհոգ ու հեքիաթային մանկություն:

Ճշմարիտ է ասված, որ յուրաքանչյուր երեխայի մեջ մի բուռ հայրենիք կա, հետևաբար երեխայի հանդեպ մոտեցումը վերաբերմունք է հայրենիքին: Երեխայի պաշտպանությունը հայրենիքի պաշտպանությունն է: Եվ իմ մեծագույն ցանկությունն է արժանապատվորեն մեծացնել հայրենիքի վաղվա պաշտպաններին, վաղվա քաղաքացիներին:

Կրկին շնորհավորելով բոլոր երեխաներին օրացույցի ամենապայծառ տոնի առթիվ՝ ցանկանում եմ, որ նրանց կյանքի յուրաքանչյուր օրը լցված լինի ուրախությամբ, իսկ ապագայի հետ կապված հեքիաթն իրականություն դառնա: